

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՁԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

21 մարտի 2016թ.

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77¹ - 77⁶ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 2016 թվականի հունվարի 21-ի N 13-Ա որոշումը և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2016 թվականի հունվարի 29-ի N 16-Ա հրամանը՝ ս. թ. մարտի 16-ից մինչև 18-ը ներառյալ.

ՀՀ Կոտայքի մարզպետարանի (վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խումբը) աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Հարություն Ալեքսանյանի (աշխատանքային խմբի ղեկավար), նույն վարչության՝ ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Ռոբերտ Թումոյանի, աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Սեդա Բաղդասարյանի, աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ Արամ Վիրաբյանի, աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ Կամո Թումոյանի, աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արմեն Վարդանյանի, աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության առաջատար մասնագետ Հակոբ Հովսեփյանի (աշխատանքային խմբի անդամներ) կողմից իրականացվեց վարչական հսկողություն

- արտակարգ իրավիճակների (հավելված 1),
- առևտրի և ծառայությունների (հավելված 2),
- բնապահպանության (հավելված 3),
- ընդերքօգտագործման (հավելված 4),
- անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության (հավելված 5),
- հողօգտագործման (հավելված 6),
- կրթության (հավելված 7),
- մշակույթի (հավելված 8),
- պաշտպանության (հավելված 9),
- սոցիալական պաշտպանության (հավելված 10),
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի (հավելված 11),
- տրանսպորտի և կապի (հավելված 12),
- ոստիկանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ (հավելված 13),

-առողջապահության (հավելված 14),

-քաղաքաշինության (հավելված 15),

-տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք (հավելված 16) քննազավառներում ՀՀ Կոտայքի մարզի Բուժական համայնքում:

1.Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածներով (1-16) ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կրողը քարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3.Վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունեն՝ Բուժական համայնքի ղեկավար Կարեն Գալստյան:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը ներկայացվել է ՀՀ Կոտայքի մարզի Բուժական համայնքի ղեկավարին:

Աշխատանքային խումբ՝

ղեկավար՝

անդամներ՝

 Տ. Աղեքսանյան

 Ռ. Թումոյան,

 Ս. Բաղդասարյան,

 Ա. Վարդանյան,

 Ա. Վիրաբյան,

 Կ. Թումոյան,

 Տ. Հովսեփյան,

Բուժական համայնքի ղեկավար



Կ. Գալստյան: